Анемия, являясь одним из основных осложнений как ХБП, так и ХСН, значительно усугубляет клиническое течение и прогноз больных с КРС. Активация неоангиогенеза в ишемизированной миокардиальной ткани способствует как предотвращению прогрессирования ремоделирования миокарда, так и коррекции показателей систолической функции ЛЖ при НК. Более того, ранняя коррекция анемии препаратами ЭПО у ГД и додиализных больных с КРС приводит к регрессии ГЛЖ и исправлению сократительной функции ЛЖ и, как следствие, улучшению симптомов НК, качества жизни и толерантности к физической нагрузке.

Результаты нашего и других исследований, возможно, определят тактику врача при ведении больных с синдромом кардиоренальной анемии, с предложением протоколов лечения анемии у ГД и додиализных больных с КРС, с рекомендациями относительно целевого уровня гемоглобина, его влияния на сократительную способность миокарда и качество жизни, возможные осложнения и смертность.

Изучение влияния статинотерапии на функцию почек у больных с КРС 1, 2, 4-го типов выявило в группе больных, получавших дополнительную терапию статинами (группа 1), статистически достоверное снижение уровня креатинина ( $191,7 \pm 21,2$  –  $152,8 \pm 16,8$  мкмоль/л,  $p < 0,01$ ) (рис. 3) и повышение СКФ почек за период наблюдения и лечения ( $37,1 \pm 3,4$  –  $49,9 \pm 4,8$  мл/мин/1,73м<sup>2</sup>,  $p < 0,01$ ) (рис. 4), что, по-видимому, является следствием улучшения клубочковой функции почек.




Рис. 3. Влияние статинотерапии на уровень креатинина (мкмоль/л) у больных с КРС 1, 2, 4-го типов




Рис. 4. Влияние статинотерапии на скорость клубочковой фильтрации (мл/мин/1,73м<sup>2</sup>) у больных с КРС 1, 2, 4-го типов

Полученные нами данные показывают, что, несмотря на разноречивость ряда исследований по изучению влияния статинов на функцию почек, в частности, усиление протеинурии в популяции больных с ХБП [28], длительное назначение статинов при КРС, когда имеется сопутствующая сердечно-сосудистая патология, представляется обоснованным. По нашему мнению, высокий риск сердечно-сосудистой смертности у этой категории больных диктует назначение статинов у больных с КРС и сопутствующей коронарной болезнью и болезнями периферических артерий, при наличии дислипидемии, у диализных больных с коронарной патологией, у больных с высоким риском сердечно-сосудистых осложнений вне зависимости от стадии ХБП. Однако требует дальнейшего уточнения вопрос влияния статинов на СКФ и уровень креатинина в плазме крови при различных клинико-патогенетических вариантах КРС, что будет способствовать обоснованию их применения у этого контингента больных.

Поступила 12.08.15

Կարդիոենալ համախտանիշով հիվանդների բուժման  
նոր մոտեցումներ

Ա. Մինայան

Երիթրոպոէտինով բուժման ազդեցույթունը հետազոտվել է կարդիոենալ համախտանիշի (ԿՌՀ) 2, 4, 5 տիպի 86 նախադիալիզային և 112 հեմոդիալիզային հիվանդների մոտ: Էրիթրոպոէտինով լրացուցիչ բուժում ստացած ԿՌՀ հեմոդիալիզային (85) և նախադիալիզային (23) հիվանդների մոտ հայտնաբերվել է ձախ փորոքի արտամղման ֆրակ-

ցիայի բարձրացում և սրտային անբավարարության ֆունկցիոնալ դասի բարելավում: Վերը նշվածը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է սրտամկանում անոթային էնդոթելիալ աճի գործոնի և էնդոթելիալ նախորդող բջիջների մակարդակի բարձրացումով, ինչը նպաստում է սրտամկանի նորաանոթավորմանը: Հետևաբար, սակալարյունության երիթրոպուտինով վաղ կարգավորումը ԿՌՀ նախադասական և հեմոդիալիզային հիվանդների մոտ նպաստում է ձախ փորոքի կծկողական ֆունկցիայի բարելավման և արյան շրջանառության անբավարարության նշանների, կյանքի որակի, ֆիզիկական տուեռանտության լավացման:

Երիկամների ֆունկցիայի վրա ստատինաթերապիայի ազդեցույթունը ուսումնասիրվել է 112 ԿՌՀ 1, 2, 4 տիպի հիվանդների մոտ, որոնցից 43-ը ստացել են լիպիդ նվազեցնող թերապիա, ինչը նպաստել է կրեատինինի մակարդակի նվազման և կծիկային ֆիլտրացիայի արագության բարձրացման, արյունք հանդիսանալով երիկամների ֆունկցիայի լավացման: Ստացված տվյալները հիմնավորում են ստատինների երկարատև նշանակումը ԿՌՀ դիսլիպիդեմիայի և կորոնար պաթոլոգիայի հետ համակցված դեպքերում, ինչը ունի նեֆրոպրոտեկտորային ազդեցություն և նպաստում է սիրտ-անոթային բարդությունների ռիսկի նվազման: Սակայն, ստատինների ազդեցությունը կծիկային ֆիլտրացիայի արագության և պլազմայում կրեատինինի մակարդակի վրա ԿՌՀ տարբեր տիպերի դեպքում հետազոտման կարիք ունի, ինչը կնպաստի այդ դեղամիջոցների նպատակառության:

## New approach to the management of cardiorenal syndrome patients

**A. M. Minasyan**

Erythropoietin therapy influence was examined in 86 predialysis and 112 hemodialysis patients with cardiorenal syndrome (CRS) of 2, 4, 5 types. In predialytic (23) and dialytic (85) patients with CRS, who received additional erythropoietin treatment, left ventricular ejection fraction increase and improvement of heart failure functional class were revealed. The above mentioned, apparently, is explained by the increased endothelial growth factor and endothelial progenitor cells in myocardium, promoting to the heart muscle revascularization. Thus, early correction of anemia with erythropoietin in hemodialysis and dialysis patients with CRS will improve left ventricle

contractile function, heart failure symptoms, quality of life and physical activity tolerance.

In 122 patients with CRS of 1, 2, 4 types statin therapy action was examined and in 43 of them, who had lipid lowering treatment, an increase in glomerular filtration rate and decrease in creatinine level in blood due to improvement of kidney function were revealed.

According to the results of our investigations statin treatment is considered efficient in CRS with dyslipidemia and coronary pathology, it possesses a nephroprotective action and decreases the cardiovascular risk. Further research is needed for determining statins' influence in different types of CRS, which will allow their usage in treatment of such patients.

## Литература

1. *Abd El-Aziz A., El-Kakand, EmanWagdy* Effect of Erythropoietin Therapy on Cardiac Structural and Functional Changes in End Stage Renal Disease: A Comparative Study of Full versus Partial Anemia Correction. Journal of the Medical Research Institute JMRI, 2008, v. 29, 2: (170- 6).
2. *Athyros V. G., Katsiki Niki, Konstantinos Tziomalos et al.* Preventing Cardio-renal Syndrome Rather than Treating it: Could Statins Play a Role? Open Cardiovasc. Med. J., 2011; 5: 226–230; Published online 2011 December 2:
3. *Baigent C., Landray M.J., Reith C. et al.* SHARP Investigators. The effects of lowering LDL cholesterol with simvastatin plus ezetimibe in patients with chronic kidney disease (Study of Heart and Renal Protection): a randomized placebo-controlled trial. Lancet, 2011;377:2181–92.
4. *Cirillo M.* Evaluation of glomerular filtration rate and of albuminuria/proteinuria. J. Nephrol., 2010, Mar-Apr;23(2):125-32.
5. *Deshmukh A., Mehta J.L.* Statins and renal disease: friend or foe? Curr. Atheroscler. Rep., 2011;13(1):57-63.
6. *Douglas K., O'Malley P.G., Jackson J.L.* Meta-analysis: the effect of statins on albuminuria. Ann. Intern. Med., 2006; 145: 117–24.
7. *Drueke T.B., Locatelli F., Clyne N., Eckardt K.U., Macdougall I.C., Tsakiris D., Burger H.U., Scherhag A.* (CREATE Investigators): Normalization of hemoglobin level in patients with chronic kidney disease and anemia. N. Engl. J. Med., 2006, 355: 2071–2084.
8. *Epstein M., Vaziri N.D.* Statins in the management of dyslipidemia associated with chronic kidney disease. Nat. Rev. Nephrol., 2012 Feb 21;8(4):214-23.
9. *Gilbertson D., Li S., Murray A.M., Herzog C.A., Collins A.J.* Competing risks of death vs ESRD in Medicare beneficiaries age 65þ with chronic kidney disease CHF and anemia. J. Am. Soc. Nephrol., 2002; 13: SA848 (Abstract)
10. *HAMPL H., Hennig L., Rosenberger C. et al.* Effects of optimised heart failure therapy and anemia correction with epoetin beta on left ventricular mass in hemodialysis patients. Am. J. Nephrol., 2005;25:211–229.
11. *Hayashi T., Suzuki A., Shoji T. et al.* Cardiovascular effect of normalizing the hematocrit level during erythropoietin therapy in predialysis patients with chronic renal failure. Am. J. Kidney Dis., 2000; 35: 250-256.
12. *Jie Kim E., Karien van der Putten, Marloes W., Bergevoet T.* Short- and long-term effects of erythropoietin treatment on endothelial progenitor cell levels in patients with cardiorenal syndrome. Heart., 2011 January; 97(1): 60–65.
13. *Jin B., Luo X., Lin H. et al.* A meta-analysis of erythropoiesis-stimulating agents in anaemic patients with chronic heart failure. Eur. J. Heart Fail., 2010;12:249–253.

14. *Kalaitzidis R.G., Elisaf M.S.* The role of statins in chronic kidney disease. *Am. J. Nephrol.*, 2011;34:195–202.
15. *Kleijn L., de Boer R.A., Voors A.A.* Should erythropoietin treatment in chronic heart failure be haemoglobin targeted? *Eur. J. Heart Fail.*, 2010 Mar;12(3):215-6.
16. *Koniari K., Marinos Nikolaou, Ioannis Paraskevaidis, and John Parissis* Therapeutic options for the management of the cardiorenal syndrome. *International Journal of Nephrology*, 2011.
17. *Lang R.M., Bierig M., Devereux R.B., Flachskampf F.A. et al.* Chamber Quantification Writing Group; American Society of Echocardiography's Guidelines and Standards Committee; European Association of Echocardiography. Recommendations for chamber quantification: a report from the American Society of Echocardiography's. *J. Am. Soc. Echocardiogr.*, 2005, Dec;18(12):1440-63.
18. *Massry S.G., Glasscock R.J.* Hemopoietic system in uremia. In: Massry SG, Glasscock RJ, eds. *Textbook of nephrology*. 4th ed. Philadelphia: Lippincott Williams and Wilkins 2001; 1318-24.
19. *McCullough P.A., Verrill T.A.* Cardiorenal interaction: appropriate treatment of cardiovascular risk factors to improve outcomes in chronic kidney disease. *Postgrad. Med.*, 2010 Mar;122(2):25-34.
20. *Navaneethan S.D., Pansini F., Perkovic V. et al.* HMG CoA reductase inhibitors (statins) for people with chronic kidney disease not requiring dialysis. *Cochrane Database Syst. Rev.*, 2009;(2):CD007784.
21. *Palazzuoli A., Silverberg D.S., Iovine F. et al.* Effects of betaerythropoietin treatment on left ventricular remodeling, systolic function, and B-type natriuretic peptide levels in patients with the cardiorenal anemia syndrome. *Am. Heart J.*, 2007; 154: 645-9
22. *Ponte B., Bourquin V., Stoermann-Chopard C.* Statins: what is their place in the treatment of chronic kidney insufficiency? *Rev. Med. Suisse*, 2009;5(192):463-6.
23. *Rutkowski B., Szamotulska K., Dyras P. et al.* Pharmacoeconomical aspects of anemia treatment with different epoetin forms. *Nefrol. Dial. Pol.*, 2002; 6: 165-169.
24. *Sarnak M.J., Tighiouart H., Manjunath G. et al.* Anemia as a risk factor for cardiovascular disease in The Atherosclerosis Risk in Communities (ARIC) study. *J. Am. Coll. Cardiol.*, 2002; 40:27-33.
25. *Silverberg D.S., Wexler D., Blum M. et al.* The effect of correction of anemia in diabetic and non diabetics with severe resistant congestive heart failure and chronic renal failure by subcutaneous erythropoietin and intravenous iron. *Nephrol. Dial. Transplant.*, 2003; 18: 141–146.
26. *Valderrabano F., Horl W.H., Macdougall I.C.* Pre-dialysis survey on anemia management. *Nephrol. Dial. Transplant.*, 2003; Vol.18: 89-100.
27. *Van Der Meer P., Lipsic E., Henning R.H. et al.* Erythropoietin improves left ventricular function and coronary flow in an experimental model of ischemia-reperfusion injury. *Eur. J. Heart Fail.*, 2004, 6:853–859.
28. *Verhulst A., D'Haese P.C., De Broe M.E.* Inhibitors of HMG-CoA reductase reduce receptor-mediated endocytosis in human kidney proximal tubular cells. *J. Am. Soc. Nephrol.*, 2004 Sep;15(9):2249-57.
29. *Westenbrink B.D., Lipsic E., van der Meer P. et al.* Erythropoietin improves cardiac function through endothelial progenitor cell and vascular endothelial growth factor mediated neovascularization. *Eur. Heart J.*, 2007;28:2018–2027.

УДК 612.821

**Նարդոսի եթերայուղի շտկող ազդեցության  
ուսումնասիրությունը ֆիզիկական  
ծանրաբեռնվածության պայմաններում**

**Է.Ս. Գևորգյան, Ս.Մ. Մինասյան, Ն.Ն. Քսաջիկյան,  
Ծ.Ի. Աղամյան**

*Երևանի պետական համալսարանի կենսարանական ֆակուլտետ,  
մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն  
0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1*

*Բանալի բառեր. գործառական վիճակ, ֆիզիկական ծանրաբեռնվածություն, նարդոսի յուղ, հոտաքուժություն*

ԲՈՒՀ-ում ուսուցման ժամանակահատվածը բարդ երկարատև գործընթաց է, որն ուսանողների օրգանիզմին բարձր պահանջներ է ներկայացնում: Մշտական մտավոր ու հոգեբանական լարվածությունը, աշխատանքի և հանգստի ռեժիմի խախտումը, ժամանակի անընդհատ աճող պակասը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և ուսումնական գերծանրաբեռնումը հանգեցնում են բերշարժուն կենսակերպի և սակավաշարժունության, որն էլ ապահարմարման և օրգանիզմում տարբեր ախտաբանական գործընթացների առաջացման պատճառներից մեկն է հանդիսանում: Ժամանակակից պայմաններում ֆիզիկական կուլտուրան և սպորտը համարվում են հիպոդինամիայի վերացման առավել ակտիվ գործող այլընտրանքային միջոց [3,4]: Ճիշտ ընտրված ֆիզիկական ծանրաբեռնվածությունը նպաստում է մտավոր աշխատունակության բարձրացմանը, բարենպաստ ազդեցություն է թողնում հենաշարժական, սիրտ-անոթային համակարգերի գործառական վիճակի վրա, բարձրացնում օրգանիզմի տոնուրը: Աշխատունակության բարձրացման դրական արդյունք է դիտվում միայն յուրաքնացուր անհատի օրգանիզմի գործառական վիճակին համապատասխանող ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մեթոդների կիրառման դեպքում: Սակայն, նախքան սկզբնական-բուժական միջոցառումների կազմակերպումը, անհրաժեշտ է նաև հաշվի առնել օրգանիզմում ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, բացասական տեղաշարժերի առաջացման հնարա-

վորությունը [6]: Վերջին տարիներին, մարդկանց գործառական վիճակի լավացման և աշխատունակության ապահովման համար կիրառվում են այնպիսի միջոցներ, որոնք ունեն ազդեցության լայն տիրույթ, անվտանգ են, հեշտ և հարմար: Մի շաբթ հետազոտողների կարծիքով, օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի շտկման ոչ դեղորայքային մեթոդներից մեկն է հանդիսանում հոտարուժությունը, որն ունի բարձր արդյունավետություն և ոփոկի փոքրաթիվ գործոններ [4,8,11]: H.Takeda-ն և համահեղինակները ցույց են տվել, որ հոգնածության ժամանակ հոտարուժության կիրառումը ավելի արդյունավետ է, քան մերսումը [12]: Ժողովրդական բժշկության մեջ վաղուց հայտնի թուլացնող-հանգստացնող միջոցներից մեկն է հանդիսանում նարդոսի եթերայուղը: Բացահայտված է, որ այն, ի տարբերություն ավանդական բժշկական տեխնոլոգիաների, արդյունավետ կերպով վերացնում է սթրեսով պայմանավորված հոգնածությունը և բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը տարբեր տիպի ծանրաբեռնվածությունների հանդեպ: Նարդոսով հոտարուժության կիրառումը դրական է ազդում կեկտրարտագրի ցուցանիշների վրա: Մտահուզական լարվածության և քրոնիկական հոգնածության համախտանիշի պայմաններում վերականգնվում է մտավոր աշխատունակությունը, հավասարակշռվում հոգեհուզական վիճակը [8]: Գրականության մեջ առկա են տվյալներ մարզիկների օրգանիզմի գործառական վիճակի կարգավորման և բարելավման համար նարդոսի եթերայուղի օգտագործման նպատակահարմարության վերաբերյալ [5,10]: Ցույց է տրված նաև, որ օրգանիզմի գործառական վիճակի վրա անբարենպաստ գործոնների ազդեցության կանխարգելման նպատակով առավել արդյունավետ է մի քանի մեթոդների համալիր օգտագործումը: Արտաքին միջավայրի բազմաթիվ գործոնների, այդ թվում նաև ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ հարմարվողականության գործընթացները բնութագրվում են արյան շրջանառության համակարգի ցուցանիշներով, որոնք կարող են դիտվել որպես ամբողջական օրգանիզմի հարմարողական ռեակցիաների չափանիշ: Մկանային ծանրաբեռնվածության հանդեպ հարմարվողականության ապահովումը հանդիսանում է առողջության մակարդակի պահպանման և մասնագիտական գործունեության որակական բարձրացման նախապայմաններից մեկը [10]:

Դրա հետ կապված տվյալ հետազոտության նպատակն է երել ուսումնասիրել ուսանողների արյան շրջանառության, հեմոդինամիկայի և սիրտ-անոթային համակարգերի որոշ գործառական բնութագրերի փոփոխությունները ֆիզիկական ծանրաբեռնվածության գործընթացում՝ նարդոսի եթերայուղի կիրառման պայմաններում:

## Նյութը և մեթոդները

Հետազոտությանը մասնակցել են ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի 19-22 տարեկան 22 ուսանողներ (փորձնական խումբ), որոնք չեն ունեցել ոչ մի քրոնիկական հիվանդություն և հետազոտությունների ժամանակ եղել են բացարձակ առողջ: Փորձարկվող ուսանողների ուսումնական ծանրաբեռնվածությունում բացակայել են ֆիզիկուլտուրայի դասերը. նրանք որևէ սպորտաձևով չեն զբաղվել: Հետազոտության ընթացքում օգտագործվել է նարդոսի մաքուր, հոտավետ յուլը (արտադրող ՕՕԸ <<Բնական յուղեր>>, քաղաք Սոլնեցնոգորսկ, ՏԿ 9158-004-08628011-00): Համաձայն նախապես անցկացրած թեստավորման, կիրառվող հոտը դրական էր ընկալվում բոլոր փորձարկվողների կողմից: Փորձարկումներն անցկացվել են երեք անգամ. 1.նախքան ֆիզիկական ծանրաբեռնվածությունը (ֆիզիոլոգիական նորմա); 2."Proteus Rec 3320" մակնիշի հեծանվամարզասարքի 3-րդ դիրքում 15 րոպեանց մարզումից անմիջապես հետո, որն ուղեկցվել է հոտաշտկմամբ; 3. հետծանրաբեռնվածության շրջանի 15-րդ րոպեին: Վերականգնողական շրջանի տևողությունն ունի մեծ կանխորշիչ նշանակություն, քանի որ արտացոլում է կատարվող ծանրաբեռնվածության ֆիզիոլոգիական արժեքը [3]: Հոտաշտկումը իրականացվել է սառը ինգալյացիայի եղանակով: Նարդոսի եթերայուղի ընտրությունը պայմանավորված է եղել նրա բազմակողմանի արդյունավետությամբ: Գրականության տվյալների համաձայն, եթերայուղերի ներգործության լավագույն արդյունքը դիտվում է ազդեցության 5-15 րոպեների միջակայքում: Որպես ստուգիչ օգտագործվել են մեր կողմից նախկինում ուսումնասիրված, նույն տարիքի 30 ուսանողուհիների ցուցանիշները, որոնք ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ չեն ենթարկվել հոտավետ նյութերի ազդեցությանը:

Գնահատվել և հաշվարկվել են կարդիոհեմոդինամիկայի հետևյալ ցուցանիշները. սրտի կծկումների հաճախականությունը (ՍԿՀ); սիստոլային զարկերակային ճնշումը (ՍԶՃ); դիաստոլային զարկերակային ճնշումը (ԴԶՃ); անորթազրկային ճնշումը (ԱՃ); միջին դինամիկական ճնշումը (ՄԴՃ); միջին զարկերակային ճնշումը; արյան սիստոլային ծավալը, արյան րոպեական ծավալը: ՍԿՀ-ի և զարկերակային ճնշման հիմնական ցուցանիշների (ՍԶՃ և ԴԶՃ) չափումները կատարվել են BALANSE KH 8097 տեսակի ավտոմատիկ ճնշաչափով: Ուսանողների գործառական հնարավորությունների և ֆիզիկական ծանրաբեռնվածության համապատասխանության մակարդակը գնահատելու նպատակով հաշվարկային եղանակով որոշվել են նաև հետևյալ գործակիցները՝ ԴՅ – դիմացկունության ցուցիչը; ՀՅ – արյան

շրջանառության հարմարողականության ցուցիչը; ԱՇԻՏ – արյան շրջանառության ինքնակարգավորման տիպը; ԳՎՅ – գործառական վիճակի ցուցիչը; ԾԱՀԴ – ծայրամասային անորբների ընդհանուր դիմադրությունը; ՄԱԱՑ – միոկարդի արտաքին աշխատանքի ցուցիչը; ՄԼՑ – միոկարդի լարվածության ցուցիչը; ՄԱՑ – միոկարդի արդյունավետության ցուցիչը; ԱՇԱԳ – արյան շրջանառության արդյունավետության գործակիցը: Բոլոր փորձարկվողների համար հաշվարկվել է նաև քաշա-հասակային ցուցիչը՝ ՔՀՑ: Ուսումնասիրված ցուցանիշների միջին մեծությունների և դրանց իրավիճակային փոփոխությունների հավաստիության գնահատումը կատարվել է դիսպերսիոն վերլուծության եղանակով, ըստՄտյուդենտի և չափանիշի:

### **Արդյունքները և դրանց քննարկումը**

Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ փորձարկվողների ստուգի խմբի մեծամասնության մոտ, ընդհանուր առմամբ, դիտվում է ՎԿՀ-ի սիմպաթիկ և պարասիմպաթիկ կենտրոնների ակտիվության շարժուն հավասարակշռություն, այսինքն կարդիոհեմոդինամիկական ցուցանիշները գտնվում են տարիքային չափանիշների սահմաններում: Հեծանվամարզասարքի 15 րոպե տևողությամբ ծանրաբեռնվածությունից անմիջապես հետո դիտվել է ՍԿՀ-ի և զարկերակային ձնշման ցուցիչների արտահայտված բարձրացում: ՍԿՀ, ՍԶՃ, ԴԶՃ, ԱՃ, ՄԴՃ, ՍԾ, ԱՐԾ-ի տեղաշարժերը կազմել են համապատասխանաբար 87,2%, p<0,001; 18,57%, p<0,001; 8,17%, p<0,001; 38,66%, p<0,001; 13,77%, p<0,01; 65,93%, p<0,001: Դիտված տեղաշարժերը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են վեգետատիվ հավասարակշռության տեղաշարժով դեպի գործառությների կարգավորման սիմպաթիկ կենտրոնի ակտիվացման գերակշռման կողմը, որն ուղղված է օրգանիզմում օքսիդա-վերականգնման ռեակցիաների ակտիվացման հետևանքով խախտված թթվածնային հավասարակշռության վերականգնման ապահովմանը: Վերջինս հիմք է տալիս պնդելու, որ հեծանվակներգաչափի ծանրաբեռնվածության հաղթահարումը, թերշարժուն կենսակերպ վարող փորձարկվող-ուսանողներին տրվում է բարձր ֆիզիոլոգիական գնով: Դրա օգտին է վկայում նաև ՀՅ-ի տեղաշարժը դեպի գործառությային լարվածության դաշտ ( $Z=2,9\pm0,11$ , p<0,001), ԳՎՅ-ի ցուցանիշի իջեցումը 69,5%, p<0,001 և ԴՅ-ի որոշակի լարվածությունը (աղ.1):

Վերջինիս ապացույցն է հանդիսանում նաև ԱՇԻՏ-ի ցուցանիշի արտահայտված տեղաշարժը դեպի արյան շրջանառության կարգավորման սրտային տիպի գերիշխումը: Դիտվող տեղաշարժերը կարող

*Աղյուսակ 1*

*Ուսանողների կարդիոհեմոդինամիկական ցուցանիշների  
փոփոխությունները ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ*

Ցուցանիշներ	Նորմա	Ֆիզ.ծանրա-բեռնված. անմիջապես հետո	Ֆիզ.ծանրա-բերված. 15 րոպե հետո
ՍԿՀ (զարկ/րոպե)	63,29±2,74	118,50±5,38***	97,14±3,13***
ՍԶՃ(մմ.ս.ս)	110,40± 2,04	130,91±4,96***	110,40±2,38***
ԴԶՃ(մմ.ս.ս)	72,64±2,01	78,57±2,37*	73,14±2,08*
ԱՃ(մմ.ս.ս)	37,71±2,63	52,29±3,92**	37,21±2,65***
ՄԴՃ(մմ.ս.ս)	88,86±1,88	101,10±3,16***	89,12±1,78**
ԱՄԾ(մլ)	59,25±2,13	63,92±2,23	58,71±2,20*
ԱՐԾ(լ)	4,96±0,28	8,23±0,47***	5,72±0,31***
ԳՎՑ(պ.մ.)	0,59±0,02	0,18±0,04***	0,46±0,03***
ՀՑ(պ.մ.)	2,10±0,04	2,93±0,11***	2,34±0,11***
ԱՇԻՏ(պ.մ.)	88,86±4,59	62,32±2.76***	76,44±3,57***
ԴՑ(պ.մ.)	23,32±1,68	26,76±2.75	28,13±2,41
ԱՇԱԳ(պ.մ.)	2386,70±38,14	6219,26±46,32***	3614,58±34,64***

Ստացված տվյալների հավաստիությունը՝ \*-p<0,05; \*\*-p<0,01; \*\*\*-p<0,001:

Են պայմանավորված լինել փորձարկվող ուսանողների ինչպես թերշարժուն կենսակերպով, այնպես էլ՝ ՔՀՁ-ի մակարդակի բարձրացմամբ: Վարժության ընթացքից հետո, 15-րդ րոպեին, դիտվել է հետագոտվող ցուցանիշների մեծամասնության տեղաշարժ՝ նրանց բնականոն մակարդակի վերականգնման կորմը, սակայն դրանցից մի քանիւր, այնուամենայնիվ մնացել են լարվածության դաշտում: Հեծանվակներգաչափային ծանրաբեռնվածության պայմաններում ուսանողների օրգանիզմի գործառական վիճակի և փորձարկվողների ԳՎ-ի վերականգնման գործընթացի վրա նարդոսի եթերայուղի հոտաշտկից ազդեցության բացահայտման նպատակով, միևնույն վեգետատիվ ցուցանիշների փոփոխություններն ուսումնասիրվել են նաև փորձնական խմբում: Բացահայտվել է, որ հանգստի վիճակում փորձնական խմբի հետազոտվողների կարդիոհեմոդինամիկական ցուցանիշները փոքրինչ տարբերվել են ստուգիչ խմբի միևնույն ցուցանիշներից, սակայն գտնվել են ֆիզիոլոգիկական նորմայի սահմաններում: Փորձնական խմբի հետազոտվողների տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողների գործառական վիճակի շուկման նպատակով նարդոսի եթերայուղի օգտագործումը հեծանվակներգաչափական ծանրաբեռնվածության պայմաններում հանգեցրել է ստուգիչ ցուցանիշների

համեմատ հետազոտվողների փորձնական խմբի արդյունքների էական տարրերության (աղ. 2): Փորձնական խմբի հետազոտվողների մոտ 15 րոպեանոց ֆիզիկական ծանրաբեռնվածությունից անմիջապես հետո, դիտվել է ՍԿՀ-ի բարձրացում 22 զարկ/ր-ով (25,2%, p<0,001), ՍԶՃ-ի մակարդակն էական փոփոխությունների չի ենթարկվել, միևնույն ժամանակ, ԴԶՃ-ն՝ նորմայի համեմատ մեծացել է (7,9%-ով): Այդ ժամանակ դիտվել է նաև ՍԾ-ի նվազում 9,6%-ով (p<0,01), ինչն իր հերթին հոտաշտկման պայմաններում կարող է դիտվել, որպես հարաբերականորեն թույլ արտահայտված ԱՐԾ-ի (12,5%, p<0,05)-ով աճի պատճառ: Օրգանիզմի գործառական վիճակի գնահատման ժամանակ մեծ դեր է հատկացվում ՍԿՀ-ի, ՍԶՃ-ի և ԴԶՃ-ի ցուցանիշների գուգական փոփոխություններին: ՍԶՃ-ի և ԴԶՃ-ի տարառության տեղաշարժերը պայմանավորում են նաև ԱՃ-ի նշանակալի իջեցումը (17,4%, p<0,05):

*Աղյուսակ 2*

*Ուսանողների կարդիոհեմոդինամիկական ցուցանիշների  
փոփոխությունը ֆիզիկական ծանրաբեռնվածության և նարդոսի  
եթերայուղի ազդեցության ժամանակ*

Ցուցանիշներ	Նորմա	ֆիզ.ծանր-ից անմիջապես հետո	ֆիզ.ծանր.և հոտաքուժությունից 15 րոպե հետո
ՍՀԿ(զարկ/րոպե)	84,82±2,41	106,23±3,94***	87,33±2,99***
ՍԶՃ(մմ.ս.ս)	101,45±3,2	100,17±4,68***	90.83±5,08***
ԴԶՃ(մմ.ս.ս)	63,31±0,6	68,33±1,79	63,17±3,17
ՍԾ(մ)	64,67±1,57	58,45±2,14**	58,99±2,24**
ԱՐԾ(լ)	5,45±0,14	6,13±0,18**	5,14±0,18**
ԱՃ(մմ.սնդ.պյուն)	38,54±2,84	31,83±4,08*	27,67±5,09*
ՄԴՃ(մմ.ս.ս)	79,60±1,67	82,02±2,41**	75,06±4,91**
ՀՅ(պ.մ.)	1,91±0,03	2,17±0,056***	1,79±0,14***
ԴՅ(պ.մ)	24,9±3,21	41,84±3,64***	38,41±7,54***
ԱՇԱԳ(պ.մ.)	3268,96±28,64	3381,31±36,14	2416,24±38,42
ՔՀՅ(պ.մ.)	0,34±0,04	0,34±0,04	0,34±0,007
ԱՇԻՏ(պ.մ.)	75,07±2,73	65,63±2,98***	72,57±3,52***
ԶՃՄիջ.(մմ.ս.ս.)	82,35±1,84	84,25±2,67*	77±3,52*
ԳՎՅ(պ.մ)	0,61±0,016	0,39±0,031***	0,63±0,05***
ԾԱՀԴ (դին*վ*սմ <sup>-5</sup> /մ <sup>2</sup> )	1168±14,14	1075,6±17,64	1165±29,27
ՄԱԱՅ(պ.մ.)	5,33±0,34	4,98±0,49	4,57±0,42
ՄԼՅ(պ.մ.)	8,51±0,29	10,49±0,61**	7,93±0,71**
ՄԱՅ(պ.մ.)	0,63±0,04	0,47±0,04***	0,58±0,04***

Ստացված տվյալների հավաստիությունը.\*-p<0,05 ; \*\*-p<0,01; \*\*\*-p<0,001:

Այդ պայմաններում դիտվում է նաև ՀՅ-ի անցումը թույլ արտահայտված լարվածության դաշտ ( $\Delta S=2,17\pm0,06$ ,  $p<0,001$ ), ինչն էլ հանգեցնում է ԳՎՅ-ի աննշան իջեցմանը ( $36,1\%-ով$   $p<0,001$ ), որը ստուգիչ խմբում կազմել է 69,5%, ( $p<0,001$ ): Նարդոսի եթերայուղի հոտաշուկիչ ազդեցությամբ է պայմանավորված նաև փորձնական խմբի հետագոտվողների մոտ դիտվող ԴՅ-ի բարձրացումը  $42,3\%-ով$  ( $p<0,001$ ): Հեծանվակներգաչափական ծանրաբեռնվածության պայմաններում, նարդոսի եթերայուղի հանգստացնող ազդեցությունը դրսնորվել է նաև ԾԱՀԴ-ի ցուցանիշի բարձրացմամբ ( $8,1\%-ով$ ), որով էլ պայմանավորված է ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո դիտվող արյան շրջանառության արդյունավետության գործակցի (ԱՇԱԳ) աննշան իջեցումը ( $3,4\%$ ,  $p<0,001$ ): Հեմոդինամիկական ցուցանիշների դիտվող տեղաշարժերը վկայում են այն մասին, որ արյան շրջանառության կարգավորման գործընթացին ներգրավվել են սրտային մեխանիզմները, ինչի ապացույցն է հանդիսանում ԱՇԻՏ-ի տեղաշարժը դեպի կարգավորման սրտային տիպի գերիշխումը: Միաժամանակ դիտվել է ՄԱԱՅ-ի և ՄԱՅ -ի որոշակի նվազում ( $p<0,001$ ), ինչն իր հերթին պայմանավորել է ՄԼՅ-ի հավասարի բարձրացումը ( $23,2\%$ ,  $p<0,001$ ): Մեր կողմից դիտարկված տեղաշարժերը փաստում են հոտաքության հանգստացնող ազդեցությունը ՎՆՀ-ի վրա, որն առավել ցայտուն է բտահայտված հեմոդինամիկական համակարգի ցուցանիշներում, որոնց բնորոշ է բարձր զգայունություն նարդոսի եթերայուղի բույրի նկատմամբ: Հետծանրաբեռնվածության 15-րդ բովելին փորձնական խմբում դիտվում է բոլոր հետազոտված հեմոդինամիկական և ԳՎ-ի հաշվարկային ցուցանիշների մակարդակների վերականգնման միտում՝ ֆիզիոլոգիական նոմայի սահմաններում (աղ. 2): Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից և հոտաքությունից անմիջապես հետո դիտվող տեղաշարժերը վկայում են ուսանողների օրգանիզմի գործառական վիճակի բարելավման և գործառությային հնարավորությունների մեծացման մասին: Ամենայն հավանականությամբ, նարդոսի եթերայուղի հոտի ազդեցությունը էականորեն փոփոխում է ՎՆՀ-ի վիճակը՝ սիմպաթիկ էֆեկտների նվազման և վեգետատիվ կարգավորման պարասիմպաթիկ օղակի ակտիվության մեծացման կողմը, ինչի հավաստումն են հանդիսանում մեր կողմից դիտարկված հեմոդինամիկական ցուցանիշների տեղաշարժերը: Խ. Դուանի և համահեղինակների (Duan et al.) կողմից սրտային ռիթմի վերլուծությունը ուսումնասիրելիս պարզվել է, որ նարդոսի եթերայուղն առաջացնում է պարասիմպաթիկ ակտիվության բարձրացում: Պոզիտրոն-էմիսիոն շերտագրության արդյունքում նկատվել է նաև ուղեղիկում, կեղևի դիմաձակատային և ուղեղաբնի շրջաններում տեղային ակտիվացման

առաջացում, ինչը հիմք է տալիս ենթադրել նարդոսի եթերայուղի ոչ միայն հանգստացնող, այլև՝ ակտիվացնող ազդեցության մասին [12]: Ապացուցված է, որ, ի տարբերություն ավանդական բժշկական միջոցառումներին, դիետո-, ֆիտո-, ֆիզիոթերապիայով ու մերսմամբ համակցված նարդոսի եթերայուղի շոգեգոլորշային ընդունումը (1ամիս տևողությամբ, շաբաթը 3 անգամ, 20-30 րոպե, 2-3 կարգի) առավել արդյունավետ է խթանում ասթենիկ և ընկրծախտային երևույթների բուժումը, բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը սթրեսային ներգործությունների հանդեպ [7]: Մի շարք հեղինակների կողմից սրտային ռիթմի սիմպաթիկ կամ պարասիմպաթիկ տիպի վեգետատիվ խախտումների ժամանակ խորհուրդ է տրվում նարդոսի, սուճու, նվենու եթերայուղերով հոտարնթացակարգի երկարեցումը՝ հոգեհուզական հավասարակշռման և սրտի քրոնոտրոպ ֆունկցիայի կարգավորման նպատակով [1]: Չնայած նարդոսի եթերայուղի օրգանիզմի տարբեր ֆունկցիաների վրա ունեցած ազդեցության բազմաթիվ տվյալների առկայության, նրա հոտարուժական ազդեցության մեխանիզմում դեռևս կան շատ անհասկանալի հարցեր: Կասկած չի հարուցում, որ հոտառական գրգոխների վրա ազդեցության յուրահատուկ մեխանիզմում ներգրավված են ԿՆՀ-ի առանձնահատուկ ընկալչական շրջանները, ինչպես նաև ուղեղի լիմբիական, զգայական և ոչ սպեցիֆիկ կառույցները: Մեր կողմից ստացված տվյալները բույլ են տալիս եզրակացնել, որ հեծանվակներգաչափական ծանրաբեռնվածությունը հանգեցնում է վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման սիմպաթիկ կենտրոնի ակտիվության արտահայտված բարձրացման՝ ապահովելով օրգանիզմի գործառական հնարավորությունների օրինաչափ իջեցումը: Միևնույն ժամանակ հեծանվամարզակարքի ծանրաբեռնվածությամբ պայմանավորված նարդոսի հոտավետ եթերայուղի օգտագործումը նպաստում է ուսանողների գործառության ցուցիչների մակարդակների շտկմանը՝ բարձրացնելով նրանց օրգանիզմի հարմարվողական հնարավորությունները և ապահովելով ֆիզիոլոգիական արժեքի իջեցումն, ի հաշիվ գործառական համակարգերի աշխատանքը տնտեսող գործնթացների ակտիվացման:

Այսպիսով, ժամանակակից բժշկության ու ֆիզիոլոգիայի բնագավառում առկա են հոտարուժության օգտակարության և օրգանիզմում սթրետով պայմանավորված խախտումների կանխարգելումն ապացուցող բազմաթիվ տվյալներ: Դրա հետ կապված, հոտարուժական ծրագրերի մշակումն ու կիրառումը պոլիկլինիկաներում, առողջապահական և ուսումնական հաստատություններում կնպաստի ազգաբնակչության կյանքի որակի ու առողջության բարելավմանը:

## **Корrigирующее влияние эфирного масла лаванды при физической нагрузке**

**Э.С. Геворкян, С.М. Минасян, Н.Н. Ксаджикян, Ц.И. Адамян**

Исследованы сдвиги некоторых показателей функционального состояния и кардиогемодинамики студентов при 15-минутной велоэргометрической нагрузке в условиях холодной ингаляции ароматическим маслом лаванды и на 15-й минуте постнагрузочного восстановительного периода. Показано, что применение ароматического масла лаванды способствует нивелированию сдвигов в уровне функциональных показателей студентов, обусловленных фиксированной нагрузкой на велотренажере, повышая адаптационные возможности организма. Эфирное масло лаванды обуславливает понижение “физиологической стоимости” выполнения студентами физической нагрузки за счет усиления процессов экономизации работы функциональных систем. Купируя инициируемое физической нагрузкой повышение симпатических влияний на организм, масло лаванды способствует быстрому восстановлению функционального состояния организма в ближайший постнагрузочный период. В качестве контроля использованы показатели функционального состояния и кардиогемодинамики студентов, которые при велоэргометрической нагрузке не подвергались корригирующему влиянию аромата лаванды.

### **Corrective influence of lavender essential oil at physical activity**

**E.S. Gevorkyan, S.M. Minasyan, N.N. Ksadzhikyan, Ts.I. Adamyan**

There were investigated changes of the functional condition and cardiohemodynamics of students at 15-minute bicycle exercise load in conditions of cold inhalation of aromatic lavender oil and 15-minute post-exercise recovery period. It has been shown that the use of aromatic oil of lavender promotes normalization of the level of functional performance of students after load cycling, increasing the adaptive capacity of the organism. Lavender essential oil causes reduction of *physiological cost* in students performance of physical activity by accelerating the processes of economization of the functional systems. Lavender oil contributes to the rapid recovery of the functional state of the body in the early post-exercise period.

## Գրականություն

1. *Быков А.Т., Маяренко Т.Н.* Ароматерапия в управлении вегетативной регуляцией ритма сердца. Вопр.курортологии, физиотерапии и леч.физ.культуры, 2003, 6, с.6-9.
2. *Геворкян Э.С., Минасян С.М., Абраамян Э.Т.* Изучение степени толерантности сердечно-сосудистой системы студентов к велоэргометрической нагрузке. Валеология, 2013, 3, с.61–68.
3. *Калакутский Л.И., Лебедев П.А., Комарова М.В., Пovalяева Р.Я.* Мониторинг сердечного ритма в объективной оценке физиологических проб для исследования функционального резерва человека. Мат. III Всерос. науч.-практ.конф. «Функциональное состояние и здоровье человека», 2010, с. 283–285.
4. *Маяренко Ю.Е., Быков А.Т., Маяренко Т.Н.* Современные представления о двигательной активности как функции обеспечения здоровья. Мат. III Всерос. науч.-практ. конф. “Функциональное состояние и здоровье человека”. Ростов н/Д, 2010, с.77-79.
5. *Мялук С.М.* Обоснование необходимости исследований сочетанного применения арома- и музыкотерапии для восстановления работоспособности спортсменов. Физическое воспитание студентов творческих специальностей. Сб.науч. статей. Харьков, 2005, вып.3, с.45-51.
6. *Наркевич Е.Н.* Эфирные масла в практике стресс индуцированных патологий (обзор литературы). Медицина и образование в Сибири. 2008; 5: [www.ngmu.ru/cozo/mos/article/text](http://www.ngmu.ru/cozo/mos/article/text).
7. *Низамова Э.И., Гильмутдинов А.Р., Кунафин А.Ф.* Влияние данс- и ароматерапии на динамику ряда психологических параметров у больных язвенной болезнью, перенесших факторы болевого стресса. Вест. восст. мед., 2007, 2(20), с.70-72.
8. *Попов В.М., Сентябрев Н.Н., Мандриков В.Б.* Динамика функционального состояния организма и характеристик анаэробной работоспособности бегунов-спринтеров при воздействии эфирных масел. Научно-теоретический журнал „Ученые записки”, 2011, т.75, 5, с.96-100.
9. *Сентябрев Н.Н., Карапулов В.В., Кайдалин В.С., Камчатников А.Г.* Эфирные масла в спортивной практике. Волгоград, 2009.
10. *Шутова С.В.* Немедикаментозная оптимизация функций мозга у студентов при адаптации к условиям обучения в вузе. Тамбов, 2012.
11. *Duan X., Tashiro M., Wu D. et al.* Autonomic nervous function and localization of cerebral activity during lavender aromatic immersion . Technol. Health Care, 2007, v. 15 (2), p. 69-78.
12. *Takeda H., Tsujita J., Kaya M., Takemura M., Oku Y.* Differences between the physiologic and psychologic effects of aromatherapy body treatment. J. Altern. Complement. Med., 2008. v. 4 (6), p. 655-661.

УДК 616.381-072.1-089

**Ամբողջովին արտադրովայնամզային էնդոսկոպիկ  
վիրահատությունները երկկողմանի աճուկային  
ձողվածքների բուժման մեջ**

**Ս.Ա. Ստեփանյան<sup>1,2</sup>, Կ.Ն. Գուտս<sup>3</sup>, Հանի Ալ Աբեղ Ալ  
Սուստաֆա<sup>2</sup>, Հ.Հ. Եղիազարյան<sup>2</sup>, Հ.Ս. Հովհաննիսյան<sup>1</sup>,  
Կ.Տ. Փափազյան<sup>2</sup>, Ա.Յու. Ալեքսանյան<sup>2</sup>**

*<sup>1</sup>ԵՊՀ վիրաբուժության թիվ 1 ամբիոն*

*<sup>2</sup>«Արմենիա» ՀԲԿ վիրաբուժության կլինիկա*

*<sup>3</sup>Մեմմինգենի հիվանդանոց, վիրաբուժության կլինիկա*

*(ք. Մեմմինգեն, Գերմանիա)*

*0025, Երևան, Կորյունի փ., 2*

*Բանալի բառեր.* աճուկային ձողվածք, լապարասկոպիկ հերնիապլաստիկա, ամբողջովին արտադրովայնային հերնիապլաստիկա, TEP մեթոդ, Swing-Contact հերնիապրոթեզ

Աճուկային ձողվածքների բուժման նպատակով առաջարկվել են մոտ 300 մեթոդներ [1]: Ընդ որում առաջարկվել են վիրահատական մուտքեր ինչպես մաշկից դեպի աճուկային խողովակ, այնպես էլ որովայնի խոռոչի կողմից՝ որովայնամզից դեպի աճուկային խողովակ ուղղություններով: Տևական ժամանակ աճուկային ձողվածքի ռադիկալ վիրահատության ժամանակ կիրառվել են աճուկային տարածությունում որովայնի պատի ամրացման մեթոդներ սեփական հյուսվածքներով: Վերջին տասնամյակներում առատովառապատճենական մեթոդներին փոխարինելու են եկել վիրահատական միջամտությունները սինթետիկ ցանցերով, քանի որ առատովառապատճենական մեծամասամբ ենթարրում էր հյուսվածքների ձգում, ինչն էլ ձողվածքի կրկնության պատճառ է հանդիսանում: Ձողվածքների վիրաբուժությունում ընդհանրապես և աճուկային ձողվածքների բուժման մեջ մասնավորապես նոր էտապ բացվեց սինթետիկ հերնիապրոթեզների կիրառումով, որոնք թույլ են տալիս կատարել պլաստիկա առանց ձգման, ինչը կարևոր նախապայման է ձողվածքի կրկնությունը կանխելու համար [1, 3, 7]: Առաջին անգամ սինթետիկ ցանց մարլեքսի կիրառման մասին հերնիապլաս-

տիկայի ժամանակ հաղորդել է վիրաբույժ Usher-ը 1958 թ.-ին [11]: Այդ ժամանակներից սկսած քժշկական արդյունաբերությունը արտադրել է բազմապահի հերնիապրոթեզներ՝ ինչպես ցանցերի, այնպես էլ սինթետիկ նյութի ամբողջական շերտերի ձևով [1, 3]: Սակայն հերնիալոգիայի մեջ դեռևս մնում են չլուծված խնդիրներ, որոնք պահանջում են բազմակողմանի մոտեցում: Այդպիսի խնդիրներից մեկը վիրահատությունից հետո աճուկային շրջանի քրոնիկ ցավն է, որն այդ հատվածով անցնող նյարդերի և նրանց ձյուղերի վնասաման արդյունք է: Վնասումը տեղի է ունենում ինչպես հյուսվածքների մոբիլիզացիայի, այնպես էլ սինթետիկ հերնիապրոթեզը հյուսվածքներին կարելու փուլում: Այս խնդրի լուծումը մասնակիորեն կապվում է աճուկային ճողվածքների տեսաէնդոսկոպիկ (լապարասկոպիկ) բուժման հետ [9]:

Լապարասկոպիկ մեթոդի կիրառումը աճուկային ճողվածքների վիրահատական բուժման մեջ ունի մոտ 3 տասնամյակների պատմություն: Արդեն պատմության գիրկն են անցել IPOM (intraperitoneal onlay mesh) մեթոդի մոդիֆիկացիաները, երբ որովայնի խոռոչի կողմից աճուկային շրջաններում որովայնամզի վրա ֆիքսված սինթետիկ ցանցերն առաջացնում էին արտահայտված կպումային պրոցես, աղիների պատի վնասում և խուղակներ: Լայն տարածում ստացած TAPP (transabdominal preperitoneal) մեթոդը ևս զուրկ չէ որոշ թերություններից (ներորովայնային մուտք, որովայնամզի վնասում, սինթետիկ ցանցի ֆիքսման սահմանափակ հնարավորություններ): Այս առումով շահեկան դիրքերում է TEP (total extraperitoneal) մեթոդը, որի դեպքում խուսափում ենք ներորովայնային մուտքից և դրա հետ կապված հնարավոր բարդություններից [2,4]:

Լապարասկոպիան ապահովում է հյուսվածքների փոքր վնասում, սակայն առաջարկվող հերնիապրոթեզների մեծ մասի դեպքում պահանջում է լապարասկոպիկ հերնիաստեղլերների միջոցով այդ պրոթեզների ֆիքսում հյուսվածքներին, որը զգալի խնդիրներ է առաջացնում: Նախ՝ հերնիաստեղլերը անհամեմատ թանկ արժե, քան հերնիապրոթեզը, ինչը բարձրացնում է վիրահատության արժեքը, և հերնիաստեղլերի կիրառումը ստեղծում է աճուկային շրջանի հյուսվածքների վնասման վտանգներ, որոնցից խնդրահարույց է վերը նշված նյարդերի վնասումը, ինչը բերում է քրոնիկ ցավի հետվիրահատական շրջանում և իշեցնում վիրահատվածի կյանքի որակը [5,6,10]: Այս հարցի լուծումը տեսանելի է դարձել ի շնորհիվ լապարասկոպիկ մեթոդի և ինքնաֆիքսվող ցանցերի համակցված կիրառման, երբ և հյուսվածքների վնասումն է նվազագույնի հասցել, և հերնիապրոթեզի ֆիքսում չի կատարվում, այն իր մակերեսի անհարթությունների շնորհիվ ինքն

Է ֆիբուլում հյուսվածքներին, ինչպես *Swing-Contact* ցանցերի դեպքում [8,10]:

ԱՃՈՒԿԱՅԻՆ ՃՈՂՎԱՃՐՆԵՐԻ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԵջ ԽԱՆԴԻՔ Է ԽԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՆԱև Երկկողմանի ՃՈՂՎԱՃՐՆԵՐԻ ԴԵՎՐՈՒՄ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿՏԻԿԱՅԻ հԱՐԳՇՐ: ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ ԽՆՉՎԵՍ ՃՈՂՎԱՃՐՆԵՐԻ ՊԱԴԻԿԱԼ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ըՆԹԱԳՐՈՒՄ, Այնպես ԷԼ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԼԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՉԱԲԱՐ ԸՆԴՄԻՀՈՒՄՆՈՎ: ԿԻՐԱՊՎՈՒՄ Է ՆԱև Երկկողմանի ԱՃՈՒԿԱՅԻՆ ՃՈՂՎԱՃՐՆԵՐԻ ԴԵՎՐՈՒՄ ՈՐՈՎԱՅՆԻ ԱռԱՉԱՅԻՆ ՊԱՏԻ ԱՐՈԹԵՂՎԱՎՈՐՈՒՄԸ ՍՄՈՎ ՊԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ: ՆՉՎԱԾ ՄՈՏԵԿցՈՒՄՆԵՐԸ ԼԱՎՎԱԾ ԵՆ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՊԳՎԱԼԻ ՄՐԱՎԱՐՄԱՅԻ ՀԵՏ և Այս ՄԵԴԱԿԱՆ ԼԱ ՄԵՏԱՎԱԿՆՈՒԿՈՎԱԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՎՈՎ Է ՄՐԱՎԱՐ ՆՎԱՊ ՎՆԱՍԱՄԱՄԲ ԽԱՍՆԵԼ ՀԻՎԱՆԴԻ ԱՊԱՔԻՆՄԱՆ [11]:

Երկկողմանի աճուկային ձողվածքների բուժման այս հարցերը դեռևս ըննարկումների առարկա են հանդիսանում հերնիողիալում:

## Նյութը և մեթոդները

«Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոնի վիրաբուժության կլինիկայում 2014թ. մարտ – 2015թ. հունիս ժամանակահատվածում 26 հիվանդների մոտ կատարվել են տեսաէնդոսկոպիկ վիրահատություններ ամբողջովին արտառովայնամզային մուտքով *Swing-Contact* ինքնափիքսվող ցանցերով։ Հիվանդներից 6-ի մոտ հայտնաբերվել են երկվորմանի ձողվածքներ։ Նրանցից 3-ի մոտ ախտորոշվել է ուղիղ, 3-ի մոտ՝ թեք ձողվածք։ Բոլոր հիվանդները տղամարդիկ են, միջին տարիքը 48տ. էր (32-ից 65տ. միջակայքում)։ Բոլոր ձողվածքների դեպքում ձողվածքապարկը ֆիզիկական լարման ժամանակ որոշվում էր աճուկային խողովակի սահմաններում, հեշտ ներուղղվող էր։ Հիվանդները նշում են ձողվածքների առաջացման մինչև 5 տարվա անամնեզ, ոչ մի դեպքում չէր կիրառվել ամրակապ (բանդաժ)։

Բոլոր հիվանդներն անցել են ստանդարտ հետազոտություններ, ինչպես արյան և մեզի ընդհանուր վերլուծություն, կռագուլոգրամի որոշում, արյան բիոքիմիական վերլուծություն, էլեկտրաստագրություն, արյան խմբի, ռեզուս ֆակտորի որոշում, որովայնի և հետորպայնամզային տարածության սոնոգրաֆիա, կրծքավանդակի ռենտգենարանական հետազոտություն: Բոլոր հիվանդները ստացել են վիրահատությունից մեկ ժամ առաջ լայն սպեկտրի հակաբիոտիկ:

Հիվանդները վիրահատվել են ընդհանուր էնդոտրախիեալ անզգայացման տակ:

Կատարվել է մոտ 2սմ երկարությամբ կտրվածք պորտի շրջանում, հատվել և բացվել է որևէ կողմից ուղիղ մկանի բունցի առաջին թերթիկը և մատով տարածություն է ստեղծվել մկանի տակ։ Նշված տարածության մեջ տեղադրվել է դիստալ հատվածում խողովակի շուրջը բալոնով տրոակար (blunt-tip trocar)։ Տրոակարի միջով որովայնի պատի մեջ մղվում է ածխաթթու զազ մինչև 12-14մմ սնդայուն ձնշմամբ։ Տրոակարով որովայնի պատի մեջ է անցկացվել 0° 10մմ տրամագծով դիտակը (լապարասկոպ – Karl Storz, Tuttlingen, Germany), որի հսկողության տակ տեղադրվում են 2 հատ 5մմ տրոակարներ միջին գծով պորտի և սիմֆիզի միջև։ Այդ տրոակարներով վիրահատական դաշտ են անցկացնում սեղմակ և բիպոլյար պինցետը, որոնցով կատարում են հյուսվածքների մորֆիլիզացիա։ Մորֆիլիզացիայի վերջնական նպատակը աճուկային շրջանի թույլ հատվածները ազատելն է, ճողվածքապարկի մորֆիլիզացիան և ներուղղումը որովայնի խոռոչ։

Աճուկային շրջանի մորֆիլիզացիայից հետո *Swing-Contact (The bio-science, France)* սինթետիկ ցանցը ոլորվում է փաթեթի ձևով և պորտի շրջանի տրոակարի միջով անցկացվում որովայնի պատի մեջ, որտեղ սեղմակների օգնությամբ այն բացվում է և տեղադրվում աճուկային շրջանում՝ փակելով աճուկային արտաքին, ներքին օղերի շրջանները, ազդրային օղը։ Պարտադիր պայման է, որ ճողվածքապարկը գտնվի հերնիապրոթեզից հետ և ներուղղված դեպի որովայնի խոռոչ։ Միակողմանի ճողվածքների դեպքում այս փուլն ավարտում է ռադիկալ վիրահատությունը, տեղադրվում են դրենաժներ, կատարվում է դեսուֆյացիա։ Երկողմանի ճողվածքների դեպքում պորտի շրջանի վերքի մեջ կատարվում է հակառակ կողմի ուղիղ մկանի պատյանի առաջային պատի կտրվածք, ստեղծվում է թունել այդ կողմի մկանի տակ և տրոակարը տեղափոխվում է այդտեղ։ Անցկացվում է դիտակը և նրա հսկողության տակ միջին գծով տեղադրված 5մմ տրոակարները տեղաշարժվում են այդ կողմ, նրանց միջով անցկացված գործիքներով կատարվում է հյուսվածքների մորֆիլիզացիա վերը նշված ձևով և ընթացքով։ Դիտակի տրոակարի միջով անցկացվում է *Swing-Contact* ցանցը և վերը նշված ձևով տեղադրվում աճուկային շրջանում։ Հաշվի առնելով, որ միջին գծով, սիմֆիզի շրջանում երկու ցանցերը հպվում են իրար և հնարավոր է նրանց սահում, անցում հակառակ կողմի աճուկային շրջաններ, դրանք մեկական զամի միջոցով (*AbsorbaTack, Covidien, Norwalk, CT*) ֆիքսվում են ցայլուկրին։ Ցանցերից հետ գտնվող տարածություններում տեղադրվում են մեկական դրենաժներ, որոնք անցկացվում են 5մմ տրոակարների վերքերով։ Կատարվում է դեսուֆյացիա, հեռացվում է պորտի շրջանի

տրոակարք, ուղիղ մկանների պատյանների առաջային պատերի վերը կարգում են:

Հետվիրահատական շրջանում հիվանդները ստացել են ոչ ստերոֆիպային հակաբորբոքիչ միջոցներ 2-3 օրերի ընթացքում: Նրանք դուրս են գրվում ստացիոնարից հետվիրահատական 3-4-րդ օրերի ընթացքում:

Մեթոդի յուրացման շրջանն ընթացել է Գերմանիայի Դաշնության Բավարիայի Մեմմինգեն քաղաքի հիվանդանոցում (կլինիկայի դեկան՝ ԵՊՀ պատվավոր դոկտոր, պրոֆ. Կարստեն Գուտտ):

### **Արդյունքները և դրանց քննարկումը**

Տուտալ արտառովայնամզային մեթոդով վիրահատության նպատակով ընտրվել են հիվանդներ ձողվածքի զարգացման վաղ շշանում: Երկկողմանի ձողվածքներով տառապող 6 հիվանդներից 3-ի մոտ դիտվել է թեր ձողվածք խողովակային և սերմնալարային փուլում, երբ ձողվածքապարկը դեռևս չի իջել փոշտի սահմաններ և չկան արտահայտված կպումներ շրջակա հյուսվածքների հետ, ուղիղ ձողվածքով տառապող 3 հիվանդների մոտ առկա էր ձողվածքապարկերի փոքր մինչև 4-5սմ չափեր: Մի շաբաթ հեղինակներ հատուկ ընդգծել են ТЕР մեթոդի համար այն հիվանդների ընտրությունը, որոնց ձողվածքապարկը չի հասել մեծ չափերի [4]: Մենք անհրաժեշտ ենք համարում այն հիվանդների նկատմամբ զգույշ վերաբերմունքը, որոնք երկար ժամանակ կրել են ամրակապ: Այդ հիվանդները պետք է հանվեն ТЕՐ խմբից կամ նրանց վիրահատությունների ժամանակ պետք է նկատի ունենալ կոնվերսիայի ցածր շեմի հնարավորությունը:

Երկկողմանի աճուկային ձողվածքերի վիրահատությունների ժամանակ տրոակարների առավել օպտիմալ դասավորությունն է նրանց տեղադրումը միջին գծով (պորտի շրջանում և պորտից ցայլը տարածության վրա միջին գծով): Առաջարկված են տարբերակներ, երբ 5մմ տրոակարներից մեկը ТЕՐ մեթոդի ժամանակ տեղադրվում է աճուկային շրջանի լատերալ մասում: Այս դասավորության դեպքում կարիք է լինում փոխել տրոակարների դիրքը, որը տեխնիկական դժվարություններ է ստեղծում:

Երկկողմանի աճուկային ձողվածքների ժամանակ վիրահատության միջին տևողությունը կազմում է 90 րոպե (80-150 րոպեի սահմաններում): Վիրահատության տևողությունն ավելի կարճ է եղել աճուկային ուղիղ ձողվածքների դեպքում, թեր ձողվածքների միջամտությունները երկար են տևել ի հաշիվ ձողվածքապարկի մոբիլիզացիայի, սերմնալարի էլեմենտներից անջատելու համար պահանջ-

վող երկար ժամանակի: Ներկա աշխատանքում չեն դիտվել ներվի-  
րահատական ծանր բարդություններ, ինչպես աղիների, միզապարկի,  
գստային անոթների, ստորին էափաստրալ անոթների վնասումները:  
Հետվիրահատական բարդություններից դիտվել է մեկ դեպքում ամոր-  
ձու այտուց: Հիվանդների մոտ չեն դիտվել ցավ աճուկային շրջան-  
ներում, պարէսթեզիաներ, հիպերէսթեզիաներ: Բոլոր հիվանդները  
առողջացել են լիովին: Հետվիրահատական ստացիոնար բուժման  
տևողությունը կազմել է միջինը 2-4 օր, դրւու գրումից հետո վիրա-  
հատվածները վերադարձել են աշխատանքի և ակտիվ կյանքի 15 օրե-  
րի ընթացքում: Հետվիրահատական հսկողություն իրականացվել է մի-  
ջինը 10 ամիսների ընթացքում (1-14 ամիսների սահմաններում): Ճող-  
վածքի կրկնություն չի դիտվել:

Երկկողմանի աճուկային ճողվածքների վիրաբուժական բուժման  
մեջ լապարասկոպիկ մեթոդի առավելությունը կայանում է նրանում,  
որ այն թույլ է տալիս միաժամանակ, մեկ վիրահատության ընթաց-  
քում, կատարել ուղիկալ վիրահատություն երկու կողմերից: Այս հնա-  
րավորությունը ստեղծում են ինչպես TAPP, այնպես էլ TEP մեթոդները:  
Երկրորդի առավելությունը կայանում է նրանում, որ այս դեպքում  
հնարավոր է խուսափել մուտքից որովայնի խոռոչ և որովայնի օր-  
գանների հնարավոր վնասումից [1-4]: Պետք է նշել նաև, որ տրոա-  
կարների դասավորության մեր կողմից կիրառված տարբերակի դեպ-  
քում կարելի է չփոխել 5մմ տրոակարների դիրքը և, թեքելով մի կողմից  
մյուսը, կատարել միջամտություն մյուս կողմից:

Ինչպես այլ մեթոդների դեպքում, TEP-ի ժամանակ ևս զգալի  
դժվարություններ էին առաջանում ցանցի ֆիքսման հարցում: Նոր  
տեխնոլոգիայի սինթետիկ ցանցերի գուգակցումը TEP մեթոդի հետ  
թույլ է տալիս լուծում առաջարկել վերը նշված խնդիրներին: *Swing-Contact*  
ցանցն ունի երկու կողմից անհարթ մակերես, ելուստներ,  
որոնք թույլ են տալիս այն առանց ֆիքսող ապարատի ամրացնել  
հյուսվածքներին: *Swing-Contact* ցանցերի կիրառմամբ TEP մեթոդով  
երկկողմանի ճողվածքների ուղիկալ վիրահատության ժամանակ  
երկու ցանցերի հպման տեղում կատարվում է նրանց ֆիքսում մեկա-  
կան գամով՝ ցանցերի սահում միմյանց նկատմամբ թույլ չտալու հա-  
մար: Ցանցերի ֆիքսում նրանց եզրագծով, որը սովորաբար կատար-  
վում է պոլիառոպիլենային կամ այլ հիմքով հերնիապրեզների ժա-  
